ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թումանյանի համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 18-ին ժամը 11^{00} –ին տեղի կունենա անշարժ գույքերի աճուրդ-վաճառք 2 լոտով: :

Լոտ 1. 06-004-0015-0057 կադաստրային ծածկագրի 0,02177 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գին սահմանել 460000 ՀՀ դրամ:

Լոտ 2. 06-004-0255-0022 կադաստրային ծածկագրի 0,059981 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս: Մեկնարկային գին սահմանել 650000 ՀՀ դրամ:

Հողամասերի աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%–ի չափով,մասնակցության վճարը՝ 10000 ՀՀ դրամ, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով: Նշված հողամասերի նկատմամբ սահմանափակումներ և սերվիտուտներ չկան:Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հայտ, մասնակցության վճարի անդորրագիր և անձնագրի պատճեն: Հայտերն ընդունվում են Թումանյանի համայնքապետարանում երկուշաբթիից-ուրբաթ, ժամը՝ 09^{00}ից մինչև 18^{00}: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ:Մանրամասներին ծանոթանալու համար դիմել Թումանյանի համայնքապետարան կամ զանգահարել 098-048- 046 հեռախոսահամարով: